ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՈՒ 03/1

ք. Երևան «Ox » «փետրվար » 2013թ.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, ի դեմս ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Ս.Քրմոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից և ՀՀ ԱՆ «Գյումրու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս քոլեջի տնօրեն Մ.Մարտիրոսյանի, որը գործում է քոլեջի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրի շրջանակներում Գյումրու պետական բժշկական քոլեջի միջին տարեկան 82 սովորողների համար հաշվարկված (առանց ընդունելության), կրթաթոշակի հատկացման պարտավորությունները ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի 09.03.02.02 ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում:

2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Պատվիրատուն պարտավորվում է Կատարողի միջոցով վճարել կրթաթոշակ, որը կազմում է 4674,0 հազար ՀՀ դրամ(Հավելված 1;2):

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.3 Պատվիրատուին իրավունք է վերապահվում պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել՝ ավելացնել կամ նվազեցնել:

3 ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4 ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ առողջապահության նախարարություն ՊՈԱԿ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	,Գյումրու պետական բժշկական քոլեջ
Հ/Հ 900011105088	Հ/Հ 163128117708
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 05504575
ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար՝ Ս.Քրմոյան (ստորագրություն)	Տնօրեն՝ Ս.Սարգսիրոսյանի (ստորագրություն)

Հավելված 1
«01» «փետրվարի» 2013թ. կնքված N պայմանագրի

ՀՀ առողջապահության նախարարության և ԱՆ <Գյումրու պետական բժշկական քոլեջ> ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրով 2013թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 23-ը ժամանակահատվածում իրականացվող ծառայությունների տեսակները և ծավալները

Ուսանողների դասակարգում	Ուսանողների կողմնորոշիչ թվաքանակը	Կրթաթոշակի գումարը(մեկ ուսանողի համար մեկ ամսվա համար(դր)	Ընդհանուր արժեքը հաշվետու ժամանակահատվածում (դր)
Միջին մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	82	4.750	4674.0
Ընդամենը			4674.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011105088
ՀՎՀՀ 02507171

ՀՀ առողջապահության նախարարության
աշխատակազմի ղեկավար՝ Ս.Քրմոյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Գյումրու պետական բժշկական քոլեջ»
ՊՈԱԿ

Հ/Հ 163128117708
ՀՎՀՀ 05504575

Տնօրեն՝ Մ.Մարտիրոսյան

(ստորագրություն)

Հավելված 2
«08» «փետրվարի» 2013թ. կնքված N պայմանագրի

ԱՆ <Գյումրու պետական բժշկական քոլեջ> ՊՈԱԿ-ին 2013թ.
միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների
տրամադրվելիք գումարներն
ըստ ամիսների

N	Ամիսը	Գումարը (հազար դրամ)
1	Փետրվար	519,4
2	Մարտ	259,8
3	Ապրիլ	389,5
4	Մայիս	389,5
5	Հունիս	389,5
6	Հուլիս	389,5
7	Օգոստոս	389,5
8	Սեպտեմբեր	389,5
9	Հոկտեմբեր	519,2
10	Նոյեմբեր	519,2
11	Դեկտեմբեր	519,4
	ԸՆԴԱՄԵՆԸ	**4.674,0**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011105088
ՀՎՀՀ 02507171

ՀՀ առողջապահության նախարարության
աշխատակազմի ղեկավար՝ Ս.Քրմոյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Գյումրու պետական բժշկական քոլեջ»
ՊՈԱԿ

Հ/Հ 163128117708
ՀՎՀՀ 05504575

Տնօրեն՝ Մ.Մարտիրոսյան

(ստորագրություն)